զաւուրս երիս յաւեր քաղաքիս, և ո՞վ էր որ ցնծայր ի լուրն, եթէ ոչ անէծք նոցունց։ Մտեալ զօրօք քէ-հեսպէկն ի քաղաքս, և դարձան ապա արքայ և ա-մենայն մեծամեծք յէտրէնու և ի պատերազմէն և Շաբաթի աւուր Սեպտեմբերի ԻԹ՝ առ Տաւութ փաշայ։

Եւ այգուցն (30 Սեպտ. Կէր.) ա՛ռ վարդապետն ընծայս մրգաց և գնացաք անդ ի բանակն Տաճկաց քէհեային վէզիրի և տէֆտէրտարի։

Եւ Բշի (1 Հոկտ.) առեալ զղումաշս և զծիրանիս երթայաք քահանայիւք և աշխարհականօք, կացաք դէմ յանգիման եկեղոցն, և գային մօլնայք, էմիրք և զափուճիպաշիք և վուզարայք։ Եւ ապա վէզիրն և գիրքն իւրեանց ի վերայ ըզտոյ միոյ և ապա թա-գաւորն. և առաջի նորա երթողք, որ ասի սօլախք, ժողովէին[1]) զղումաշն, զոր կալաք ի պատիւ նոցա։ Ոչ էր սայ մեր յօժարութիւն, այլ օրէն էր ի վաղուց հետէ և պահանջէին։ Զի ի վերոյ մեր պատրիզն Հռոմ-մոց էր ի կոյս յահեակ, իսկ յաջ կողմն ամենայն ար-հեստաւորք Տաճկաց կային այլովք, և ալայ եէնկի-չէրեացն յԱնդրիանու դրանէն մինչ ի պաղատն ար-քունի յերկուց կողմանց կանգնէին առ ի սէլամն ար-քայի։ Եւ եկեալքն ախտացեալք էին՝ թագաւորն և ճորտք նորա. և գալուստն ոչ ևս էր ի կամս վէզիրի, բայց յոյժ աղճատեցաւ ի լեզու ամենայն սեռից վասն քաղաքիս հրով կործանելոյ, վասնզի յորոց բերանոյ ելանէր թէ այրեցաւ քաղաքս, զբաղումս ոպան անդ յէտրէնէ, որոց գլուխն Տապաղն երևէր։ Երկրորդ պատճառ վասն հիւանդանալոյ արքայի, հարցանէ ցբժշկապետն և ասէ. Ուստի՞ է հիւանդութիւն իմ զի

1) ժողէին.